

ԼԵԶՈՒԱԲԱՆԱԿԱՆ

**ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՅՈՒ «ՈՂԲ»-Ի ԱՇԽԱՐՀԱԲԱՐ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԸԱՏ ՍՏ. ՄԱԼԽԱՍԵԱՆԻ ԵՒ
Բ. ՈՒԼՈՒԲԱԲԵԱՆԻ**

Մ. Խորենացին եզակի գրական դէմք է մեր հին մատենագրութեան պատմութեան մէջ: Նա, 14 դար շարունակ, աննուազ հետաքրքրութիւն է շարժել հայ ժողովրդի եւ բանասիրութեան մէջ իր «Հայոց պատմութեամբ», որը ծառայել է իբրեւ ուսուցման առարկայ եւ իբրեւ ուսումնասիրութեան նիւթ: Աւելի քան 10 դար այս գրութեանը եղել է հայ ազգին իր հին անցեալի հետ ծանօթացնող միակ դասագիրքը: Աղբիւր եւ օրինակ է հանդիսացել յետագա պատմիչների համար, որոնք քաղուածքներ են արել նրանից, ընդօրինակել, եւ շարունակում են հետեւել նրա ստեղծած պատմագրութեան տիպին: Ամենաբարձր գովեստներով յիշում են նրա անունը՝ տիեզերահռչակ քերթող, պատմահայր, քերթողահայր: «Հայոց պատմութիւն»-ը յիշատակարան է նրա անունը եւ մնացել է որպէս հայ մատենագրութեան անմահ յիշատակարան: Այս գիրքը Խորենացին գրել է Սահակ Բագրատունու խնդրանքով: Ինչպէս բանասիրութիւնը ենթադրում է, սա այն Բագրատունի իշխանն է, որին Վահան Մամիկոնեանը եւ նրա համախոհ ընկերները ապստամբութեան սկզբին յայտարարեցին Հայաստանի մարզպան, որ մի ճակատամարտի ժամանակ սպանուեց մօտ 482 թուականին:

Խորենացու Պատմութիւնը բաժանւում է 3 մասի.

1. Հայոց մեծերի ծննդաբանութիւնը,
2. Հայոց միջին պատմութիւն,
3. Մեր հայրենիքի պատմութեան աւարտը:

Որպէս վերջաբան Խորենացին ընտրել է «Ողբ»-ը՝ սգալով իր սիրելի ուսուցիչների՝ Սահակի եւ Մեսրոպի վախճանը, ինչպէս նաեւ Արշակունեաց թագաւորութեան եւ Հայաստանի պետականութեան անկումը:

Ողբը, որպէս գրականութեան ժանր, ծագել է հնագոյն ժամանակներում եւ բարձր զարգացման հասել անտիկ աշխարհի եւ միջնադարի գրականութեան մէջ: Հայկական ողբի ժանրային ձեւաւորման բանահիւսական-գրական ակունքներից է ազգային-ժողովրդական լալեաց բանաստեղծութիւնը, որը կազմել է յուղարկաւորութեան անհրաժեշտ տարրը եւ ունեցել է իր յատուկ յօրինող-կատարողները: Ողբը թեմատիկ առումով լայն ընդգրկում ունի, արտացոլում է կեանքի այնպիսի իրողութիւններ ու դէպքեր, որոնք եղբրական բնոյթ ունեն: Ըստ այդմ՝ հայկական ողբերը լինում են պատմական, դամբանական, անձնական-քնարական, ողբ-յիշատակարաններ եւ այլն: Ողբին յատուկ են սրտաճմլիկ պատումը, յուզական լարուածութիւնը, խօսքի հռետորական երանգը, սուր եւ չափազանցուած համեմատութիւնները, թեմայի քնարական մեկնաբանութիւնը: Իրար են հակադրւում «Երանելի» անցեալը եւ դառնադէտ ներկան: Ի հակակշիռ ողբերգական իրականութեան՝ հեղինակի միտումը դառնում է գալիքի երազանքը, ժամանակակիցներին յորդորելն ու մխիթարելը: Ողբը գրւում է «ի սփո-

փանս տրտմեցեցելոց»¹: Հայ գրականության մէջ ողբի լաւագոյն օրինակը Մովսէս Խորենացու «Ողբ՝ Արշակունեաց թագաւորութեան վերացման եւ ս. Գրիգորի տոհմից քահանայապետութեան դադարման մասին»-ն է եւ ի հարկէ յայտնի է նաեւ Ներսէս Շնորհալու «Ողբ Եղեախոյ»-ն: Մեր խնդիրն է համեմատութեան ենթարկել Խորենացու «Ողբ»-ի երկու թարգմանութիւն՝ Ստ. Մալխասեանի եւ Բ. Ուլուբաբեանի, նկատել, թէ թարգմանութեան ինչպիսի եղանակներ ու միջոցներ են ընտրել թարգմանիչները, արձանագրել նմանութիւններն ու տարբերութիւնները:

Խորենացու «Հայոց պատմութիւն»-ը թարգմանուել է աշխարհի տարբեր լեզուներով, ունեցել է 12 հրատարակութիւն, որոնցից 9-ը՝ հայերէն, իսկ 3-ը՝ լատիներէն:

Աշխարհաբար թարգմանել են Խորեն Ստեփանէն, էմինը, Ստ. Մալխասեանը, Բ. Ուլուբաբեանը եւ այլք: Թարգմանիչներից իւրաքանչիւրը հիմք է ընդունել պատմութեան ձեռագիր տարբերակները: Գրաբարից աշխարհաբար թարգմանութիւնները պահանջել են պատմագիտական խորը գիտելիքներ եւ աղբիւրագիտութիւն: Ստ. Մալխասեանը խորամուկ է եղել թարգմանութեան մէջ, նրա թարգմանութեան միայն ծանօթագրութիւնները հաւաստում են մեծ գիտնականի խոհունութիւնը եւ պատմագիտական ճշմարիտ ընկալումները: Վերջինս նաեւ գնահատում է այլ թարգմանութիւններ. «Թարգմանութեանս միջոցին ես ձեռքի տակ ունէի Վիստոնների, էմինի երկու եւ Ստեփանէի առաջին թարգմանութիւնները, որոնց մանաւանդ էմինի եւ Ստեփանէին, յաճախ դիմում էի տեղեկանալու համար, թէ ինչպէս են նրանք հասկացել բնագրի որեւէ դժուար կամ մութ տեղը: Այս համեմատութիւնների ժամանակ ես բազմաթիւ նոր փաստեր ունեցայ, որ էմինի երկու թարգմանութիւններն էլ շատ հեռու են ճիշտ լինելուց. յաճախ պատահում են կոպիտ սխալներ, վատ հասկացուած եւ աղճատուած տեղեր: Սրանցից մի քանիսը, որ առանձին աչքի են ընկնում նշանակել են ծանօթագրութիւնների մէջ: Բնագրին շատ աւելի մօտ է Ստեփանէի թարգմանութիւնը, բայց սա մի ուրիշ պակասութիւն ունի. աշխարհաբար թարգմանութեան լեզուն սահուն չէ, որ առաջ է գալիս մասամբ բնագրի ոճին խիստ հետեւելու ձգտումով եւ մասամբ թարգմանչի սովորութեամբ, որ է՝ անշուշտ աշխարհաբարի ձեւեր գործածել, խուսափելով որքան հնարաւոր է գրաբարի ձեւերից»²: Խորենացու Պատմութեան թարգմանութիւնը կրկնակի տեսակէտից դժուարութիւններ է յարուցում՝ ճշմարտութեան եւ գեղեցկութեան կողմից: Նրա մէջ կան շատ մութ տեղեր, որ թարգմանիչները զանազան կերպ են հասկանում. կան սեղմ դարձուածքներ, ակնարկութիւններ, յատուկ նշանակութեամբ գործածուած բառեր: Շատ ուշադրութիւն է յարկաւոր այդ ամէնը ճիշտ հասկանալու համար:

Գալով թարգմանութեան լեզուի կոկիկութեանը եւ գեղեցկութեանը՝ պէտք է նշել, որ ժամանակակից գրական հայերէնը չի կարող մրցել գրաբարի հետ, նկատի առնելով վերջինիս բազմատեսակ հնարաւորութիւնները միտք արտայայտելու համար, բառերի դասաւորութեան մեծ ազատութիւնը, նախդիրները, հարուստ բառամթերքը չի կարող մանաւանդ մրցել Խորենացու ճոխ, ներդաշնակ գեղարուեստական լեզուի հետ: Այս տեսակէտից՝ բնագրի գեղեցկութեանը հաւասարուելու մասին ոչ մի թարգմանիչ չի կարող խօսել: Չնայած նրանցից իւրաքանչիւրը աշխատել է՝ որքան հնարաւոր է հաւատարիմ մնալ բնագրի արտայայտութեանը, ոճին, նոյնիսկ բառերին, բայց այն պայմանով, որ դրանք չվնասեն աշխարհաբար լեզուին եւ շատ չբարդացնեն արտայայտութեան ձեւը:

¹ [https://hy.m.wikipedia.org/wiki/Ողբ_\(գրական_ժանր\)](https://hy.m.wikipedia.org/wiki/Ողբ_(գրական_ժանր))

² Խորենացի Մ., Հայոց պատմութիւն, Երեւան, ԵՊՀ հրատ., 1990, էջ 15: Սոյն աղբիւրից կատարուող յաջորդ մէջբերումների էջերը կը տրուեն տեքստում՝ փակագծերի մէջ:

Ի տարբերություն Ուլուբաբեանի թարգմանությունները՝ Ստ. Մալխասեանի թարգմանությունը աչքի է ընկնում ծանոթագրությունների առատությամբ: Սա առաջին հերթին պայմանաւորուած է մեծ գիտնականի պատմագիտական խորը ճանաչողությամբ եւ մեծ գիտելիքների տարողունակությամբ: Ինչպէս նշում է թարգմանիչը՝ «Ծանոթագրությունները, որ տրուում են գրքի վերջում, նպատակ ունեն ընդհանրապէս՝ օժանդակ լինել ընթերցողին բնագիրը լաւ հասկանալու, բացատրել մութ տեղերը, ակնարկությունները, տալ օտարազգի թագաւորների կամ մատենագիրների մասին համառօտ տեղեկություններ, օտար քաղաքների մասին ծանոթություններ եւ այլն: Ես չեմ տուել ծանոթություններ Հայաստանի քաղաքների կամ այլ վայրերի մասին, չեմ համեմատել Խորենացու պատմածը որեւէ անցքի մասին՝ ուրիշ հայ կամ օտարազգի հեղինակի պատմածի հետ նոյն անցքի մասին. խուսափել եմ Խորենացու անձի կամ Պատմութեան գրութեան ժամանակի մասին յարուցուած հարցերը շօշափելուց եւ այլն: Եթէ ընդարձակ ծաւալով ծանոթություններ լինէի գրելու՝ բնագրից 2-3 անգամ աւելի մեծ կը լիներ, իսկ իմ տեղը սահմանափակ էր» (էջ 87): Ծանոթագրություններ կազմելիս Ստ. Մալխասեանը շատ քիչ օգտուել է էմինի կամ Ստեփանէի ծանոթագրություններից, որոնք իրենց հերթին օգտուել են օտարազգի թարգմանությունների ծանոթագրություններից, մանաւանդ Ստեփանէն: Ամէն անգամ, երբ թէկուզ չնչին չափով օգտուել է նրանցից՝ անշուշտ յիշատակել է աղբիւրը: Եւ ընդհանրապէս, Մալխասեանի ծանոթագրությունների մեծ մասը նոր նիւթերի մասին է, որոնք բոլորովին շօշափուած չեն եղել այլ թարգմանիչների կողմից:

Անդրադառնալով «Ողբ»-ի երկու թարգմանություններին՝ պէտք է նշել, որ երկուսն էլ թարգմանուել են հայերէնի ուղղագրական բարեփոխումներից յետոյ (1922 թ.), եւ ժամանակակից ուղղագրութեամբ են, սակայն Բ. Ուլուբաբեանի թարգմանությունը աւելի նոր է, քան Մալխասեանինը, այդ իսկ պատճառով հիմնական տարբերությունները քերականական, շարադասական, ինչպէս նաեւ բառօգտագործման են:

Սկսենք հէնց առաջին տողից՝ «Ողբում եմ քեզ, Հայոց աշխարհ, ողբում եմ քեզ հիւսիսային ազգերի մեջ վեհագոյնդ, որովհետեւ վերացան թագաւորդ ու քահանայդ, խորհրդականդ ու ուսուցանողդ, վրդովուեց խաղաղությունը, արմատացաւ անկարգությունը, խախտուեց ուղղափառությունը, հիմնաւորուեց տգիտութեամբ շարախօսությունը» (Ըստ՝ Ստ. Մալխասեանի, էջ 235):

«Ողբում եմ քեզ, Հայոց աշխարհ, ողբում եմ քեզ, հիւսիսային բոլոր երկրներից վեհագոյնը, որովհետեւ վերացան թագաւորդ ու քահանայդ, Խորհրդատուդ եւ ուսուցանողդ, վրդովուեց խաղաղությունդ, արմատացաւ անկարգությունը, խախտուեց ուղղափառությունը, տգիտութեամբ հաստատուեց շարախօսությունը»³ (Ըստ՝ Բ. Ուլուբաբեանի, էջ 298):

Երկու թարգմանություններում առկայ են նկատելի տարբերություններ, ինչը պայմանաւորուած է ժամանակի ընթացքում լեզուի զարգացմամբ եւ լեզուական մի շարք իրողությունների փոփոխութեամբ: Առաջին ակնառու տարբերությունը այս հատւածում շարադասականն է, Մալխասեանը թարգմանել է «բոլոր հիւսիսային ազգերի մէջ վեհագոյնդ», իսկ Ուլուբաբեանը «հիւսիսային բոլոր երկրներից վեհագոյնը», երեւում է, որ Ուլուբաբեանը հետեւում է ժամանակակից հայերէնի ճշգրիտ շարադասութեան կանոններին («Հիմնաւորուեց տգիտութեամբ շարախօսությունը» - Մալխասեան, «Տգիտութեամբ հաստատուեց շարախօսությունը» - Ուլուբաբեան), նկատելի է ստացական հոդի տարբեր կիրառություններ՝ «ազգերի մէջ վեհագոյնդ»

³ Խորենացի Մ., Հայոց պատմութիւն, Երեւան, Գասպրիմա հրատ., 2003, էջ 298: Այն աղբիւրից կատարուող յաջորդ մէջբերումների էջերը եւս կը տրուեն տեքստում՝ փակագծերի մէջ:

(Մալխասեան), «բոլոր երկրներից վեհագոյնը» (Ուլուբաբեան), «վրդովուեց խաղաղութիւնը» (Մալխասեան), «վրդովուեց խաղաղութիւնը» (Ուլուբաբեան): Ստացական հոդի կիրառութիւնը աւելի բարձր ոճ է հաղորդում եւ գրաբարեան կոլորիտ ստեղծում, սակայն Ուլուբաբեանը նախապատուութիւն է տալիս ժամանակակից հայերէնի ձեւերին: Աւելի բարեհունչ է Մալխասեանի տարբերակը՝ «Խղճում եմ քեզ, Հայաստանեայց եկեղեցիդ» (էջ 235), քան Ուլուբաբեանի «Հայաստանեայց եկեղեցի» (էջ 298), գուցէ աւելի նպատակայարմար կը լինէր Հայաստանի եկեղեցի տարբերակը: Ուլուբաբեանի՝ ժամանակակից հայերէնի ձեւերին նախապատուութիւն տալը երեւում է նաեւ բառընտրութիւնից՝ խորհրդականը ժամանակակից հայերէնում ընկալւում է որպէս քաղաքական գործիչ (նախագահի խորհրդական, վարչապետի խորհրդական), այդ իսկ պատճառով Ուլուբաբեանը նախընտրել է գործածել խորհրդատու տարբերակը: Բառագործածութեան տարբերութիւնները առկայ են ողջ տեքստում՝ «փարախի մէջ ժողովուած» (Մալխասեան, էջ 235), «փարախի մէջ հաւաքուած» (Ուլուբաբեան, էջ 298), «Երանի՛ առաջին ու երկրորդ փոփոխութիւններին, որովհետեւ եղաւ մի ժամանակ, որ փեսան եւ խաչեղբայրը հեռացուեցին, բայց դու, հարսդ, համբերեցիր ուղղախօսութեամբ պահելով ամուսնութիւնդ» (Մալխասեան, էջ 235), «Երանի՛ առաջին ու երկրորդ փոփոխութիւններին, որովհետեւ դա մի ժամանակ էր, երբ փեսան ու խաչեղբայրը հեռացան, եւ դու՝ հարսդ, համբերեցիր՝ մաքրամաքուր պահելով ամուսնութիւնդ» (Ուլուբաբեան, էջ 298): Բնագրում ուղղախօսութեամբ եւ մաքրամաքուր բառերի փոխարէն Խորենացին գրել է ողջախոհութեամբ, որը, ըստ մեզ, կարելի էր չփոփոխել:

Այս երկու թարգմանութիւնների մէջ հանդիպում ենք միեւնոյն մտքի իմաստի միանգամայն տարբեր մեկնաբանութիւնների. «Միւս անգամ էլ, երբ մէկը սիրեկանի նման յանդգնաբար յարձակուեց քո անարատ առագաստի վրայ, դու, հարսդ, չապականուեցիր, թէպէտ բռնի կերպով փեսան վտարուեց, երբ ստամբակ որդիները իրենց ծնողին անարգեցին, միանգամայն եւ խորթերը արժանապէս օտար հօրը եւ եկուոր խորթ հօրը, բայց դու այս անգամ էլ ամէն բանով լցուած շմնացիր. ականակելով քո (փեսայի) դու հովուակցի ձեռքով, մանուկներիդ փայփայեցիր, ոչ ինչպէս տագերոջ, այլ ինչպէս նոյն զաւակների տէր երկրորդ հօր ձեռքով: Իսկ այս երրորդ անգամ հեռանալիս՝ այլեւս չկայ դարձի ականակւութիւն, որովհետեւ մարմնից բաժանուեց իր ընկերոջ ու գործակցի հետ»: (Մալխասեան, էջ 236): «Եւ միւս անգամ էլ, երբ շնացող մէկը յարձակուեց փեսային վտարեց, եւ գոռոզացած որդիները անարգեցին ծնողին, ինչպէս բոլոր խորթ որդիներն են արժանաւորապէս անարգում եւ խորթ հօրը, եւ եկուոր հօրացուին, սակայն դու այդ անգամ էլ քեզ բոլորից լքուած չպահեցիր՝ յուսալով քո (հովուի) դարձին, հովուակցի հետ, մանուկներիդ փայփայեցիր: Բայց այս երրորդ հեռանալուն դարձի ոչ մի յոյս չկայ, որովհետեւ մարմնից բաժանուեց ընկերոջ եւ գործակցի հետ» (Ուլուբաբեան, էջ 298):

Յատկանշական է՝ Ստ. Մալխասեանը գրաբարի բայական համակարգի մի շարք ձեւեր փոփոխութեան չի ենթարկել, այս ամէնը նա օգտագործում է տեքստին հաւատարիմ մնալու համար. «Որովհետեւ նրանք ինձ ծնան եւ սնուցին....», (Մալխասեան, էջ 236), «Քանզի նրանք ծնեցին ինձ իրենց վարդապետութեամբ եւ սնեցին....» (Ուլուբաբեան, էջ 299):

Այսպիսով՝ ուսումնասիրելով Մ. Խորենացու «Ողբ»-ի աշխարհաբար թարգմանութիւնները՝ ըստ Ստ. Մալխասեանի եւ Բ. Ուլուբաբեանի՝ նկատեցինք, որ հեղինակներից իւրաքանչիւրը ցանկացել է որքան հնարաւոր է հաւատարիմ մնալ բնագրին՝ պահպանելով գրաբարեան կառոյցների մի շարք ձեւեր: Այս առումով բնագրին աւելի մօտ է Մալխասեանի թարգմանութիւնը, Ուլուբաբեանի թարգմանութիւնը աւելի

նոր է եւ կարելի է դիտարկել որպէս ժամանակակից թարգմանութիւն: Երկու թարգմանութիւնների էական տարբերութիւնները քերականական, շարադասական են, ինչպէս նաեւ զրոգացումն են բառօգտագործման մէջ:

ՆԱԶԻԿ ԱՍԱՏՐԵԱՆ

Երեւանի Պետական Համալսարանի Հայ բանասիրութեան ֆակուլտետի մագիստրանտ

ԳՐԱԲԱՐԵԱՆ ԱՍՈՅԹՆԵՐ

Իմաստութեամբ շինի տուն եւ հանճարով կանգնի:

Ամենեքեան որ սուր առնուցուն՝ սրով անկանիցին:

Ուր նախանձ, անդ է անկարգութիւն եւ ամենայն իրք շարք:

Եթէ ոչ հատն ցորենոյ անկեալ յերկիր մեռանիցի, ինքն միայն կայ, ապա եթէ մեռանիցի, բազում արդիւնս առնէ:

Ուր գանձն ձեր է, անդ եւ սիրտք ձեր եղիցին:

Անզգամն անգոսնէ զխրատ հօր իւրոյ:

Ոյք ուտեն զիս՝ տակաւին քաղցիցեն, եւ ոյք ըմպեն զիս՝ տակաւին ծարաւեսցին:

Քանզի վատասիրտքն լքանէին, քաջքն խիզախէին եւ նահատակքն գոչէին:

Եթէ չէր շարագործ այրն այն, ապա ոչ մատնէաք զնա քեզ:

Վասն ճշմարտութեանն մինչեւ ի մահ մարտնչէր:

Քանզի կոչէի, եւ ոչ լսէիք:

Շանթէր գալարէր իբրեւ զօձ թունաւոր: